**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3**
**№ ԲՄԱՊՁԲ-7/17-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 10.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 19.03.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/17-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.14 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 188262000 (հարյուր ութսունութ միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Չ. Սարկավարգի 157 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1510023294810100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00803554 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| ...ՅՈԼՉՅԱՆ | Ա. ԱԶԱՏՅԱՆ |

Հավելված N 1
№ ԲՄԱՊՁԲ-7/17-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ |
| 1 | Կոստյում՝ կիսաբրդյա, ամենօրյա | է-կ | 3000 | 34956 | 104868000 | 1000 | 2000 |
| 2 | Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա | է-կ | 3000 | 27798 | 83394000 | 1000 | 2000 |

Հավելված N 2
№ ԲՄԱՊՁԲ-7/17-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Կոստյում՝ կիսաբրդյա, ամենօրյա | 18231410/1 | 34956000 | 34956000 | 34956000 | 104868000 | 104868000 | 104868000 | 104868000 | 104868000 | 104868000 |
| 2 | Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա | 18231910/1 | 27798000 | 27798000 | 27798000 | 83394000 | 83394000 | 83394000 | 83394000 | 83394000 | 83394000 |

**Ծանոթություն՝** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

. ՑՈՒԼՀՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ